«Այբ» ավագ դպրոց

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ **2025 թ. ապրիլ**
Տևողություն՝ **1 ժամ 15 րոպե**

«Այբ» ավագ դպրոց

ԳԾԱԿՈԴ

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Բոլոր պատասխանները գրել այս քննաթերթիկի մեջ՝ համապատասխան տեղերում:
Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:
Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Այս փաստաթուղթը բաղկացած է **7** տպագիր և **1** դատարկ էջերից:

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

Հայոց լեզու

1. Անհրաժեշտ տեղում լրացրո՛ւ բաց թողած տառերը.

Հայոց երկիրն այն է, ***որից*** սկիզբ են առնում Տիգրիսը, Եփրատը, Արաքսը, Կուրը, Ճորոխը, բայց ***սովորաբար*** հայերի ***ձեռքում*** են եղել միայն նրանց վերին և միջին հովիտները: Հայերի բնօրրանն ամեն կողմից գոտևորված է երկնամուխ սարերով: Այսպես՝ Պոնտոսի լեռնաշղթան նրան անջատում է Սև ծովից, Տավրոսը՝ Միջերկրականից, և լեռնային մի ***ահռելի*** զանգված նրան մեկուսացնում է այն հովտից, որի մյուս կողմում Կովկասյան լեռնաշղթան է:

Հարևան թե՛ վաչկատուն ցեղերը, թե՛ հզոր պետություններն անդադրում փորձել են ***իրենց*** գերիշխանությունը հաստատել աշխարհագրորեն կարևոր այս երկրում: Ասորեստանցիներին, պարթևներին, հռոմեացիներին, արաբներին կիսով չափ է հաջողվել այդ բանը: Հայաստանը միշտ էլ պահել է որոշ ինքնավարություն, և ***միայն*** վերջին դարերի ընթացքում հայերը եղել են թուրքերի, պարսիկների և ռուսների իշխանության ***ներքո:*** Անհնարին կարող է թվալ այն, որ հայերը ***չեն կորցրել*** ազգային զգացումը և հայրենասիրությունը: Նրանք պահպանել են իրենց լեզուն, իրենց հինավուրց ավանդույթները:

5 միավոր

2. Գրի՛ր տրված բառերի հոմանիշները: Յուրաքանչյուրի համար գրի՛ր նաև մեկ հականիշ.

Բնօրրան բնաշխարհ, ծննդավայր / գաղութ, գաղթավայր———————————————

մեկուսացնել -բաժանել, հեռացնել / մեկտեղել, միացնել ——————————————————

պահել – պահպանել, հսկել, պաշտպանել / կորցնել, անհետացնել———————————

հինավուրց վաղեմի, վաղնջական / նոր, ժամանակակից———————————————

2 միավոր

3. Տեքստից դո՛ւրս գրիր տրված կաղապարներին համապատասխան երկուական բառ.

Արմատ+հոդակապ+արմատ ——երկնամուխ, լեռնաշղթա———————————————

արմատ+հոդակապ+արմատ+վերջածանց ——աշխարհագրորեն, ինքնավարություն——————

արմատ+վերջածանց———վերին, միջին, լեռնային——————————————————

նախածանց+արմատ+վերջածանց անդադրում, անհնարին ——————————

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

2,5 միավոր

4. Տեքստում գտի՛ր 2 բարդածանցավոր բառ, որոնցից մեկն ունի գոյականով արտահայտված երկվանկ արմատ, իսկ մյուսը՝ բայարմատ: Դո՛ւրս գրիր այդ բառերը և ընդգծի՛ր արմատները:

***Աշխարհ*ագրորեն, ինքնա*վար*ություն**

0,5 միավոր

5. Տեքստից դո՛ւրս գրիր ե խոնարհման 1 անկանոն բայ և 1 պատճառական բայ, կազմի՛ր այդ բայերի սահմանական եղանակի անցյալ կատարյալ և հրամայական եղանակի ապառնի ժամանակաձևերը (բայերը գործածի՛ր եզակի թվով, 1-ին դեմքով, դրական և ժխտական խոնարհումով):

Անկանոն բայ օրինակ՝ լինել կամ առնել

պատճառական բայ օրինակ՝ մեկուսացնել

սահմանական եղանակ, անցյալ կատարյալ ժամանակաձև եղա, չեղա // մեկուսացրի, չմեկուսացրի

հրամայական եղանակ եղի՛ր, մի՛ եղիր // մեկուսացրո՛ւ, մի՛ մեկուսացրու

1,5 միավոր

6. Որոշի՛ր տեքստում ընդգծված բառերի (8 բառ) խոսքիմասային պատկանելությունը և գրի՛ր դրանք ներքևում տրված համապատասխան տողում: Լրացրո՛ւ փակագծերում նշված հատկանիշները, անհրաժեշտության դեպքում նշի՛ր նախադասության մեջ շարահյուսական պաշտոնը:

Գոյական (հոլովը, հոլովումը)_____ ***ձեռքում*** _____

ածական (տեսակը, կազմությունը)__ ***ահռելի*** _____

դերանուն (տեսակը, հոլովը)__ ***իրենց*** _____

բայ (եղանակը, ժամանակաձևը, դեմքը)__ ***չեն կորցրել*** _____

մակբայ (տեսակը, կազմությունը)__ ***սովորաբար*** _____

կապ (տեսակը)____ ***ներքո***_____

շաղկապ ***բայց***_____

վերաբերական (տեսակը)___ ***միայն*** _____

2 միավոր

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

7. ա. **Շարունակի՛ր միտքն այնպես, որ նախադասությունը լինի**

1/ բարդ համադասական՝

Հարևան պետությունները միշտ փորձել են իրենց գերիշխանությունը հաստատել Հայաստանում, սակայն դա նրանց չի հաջողվել:

2/ բարդ ստորադասական՝

Հարևան պետությունները միշտ փորձել են իրենց գերիշխանությունը հաստատել Հայաստանում, որովհետև այն աշխարհագրորեն կարևոր տարածքում է գտնվում:

բ. **Կազմի՛ր բարդ ստորադասական նախադասություն՝ շարահյուսական անհրաժեշտ փոփոխությունների ենթարկելով տրված բառերը, ճիշտ դասավորելով և շաղկապներ ավելացնելով:**

Սիրել, շատ, պետք է, մենք, Հայաստան, պահպանել, մասնիկ, ամեն, այն, թանկ, հայրենիք, մեր:

Մենք պետք է շատ սիրենք և պահպանենք Հայաստանի ամեն մասնիկը, որովհետև այն մեր թանկ հայրենիքն է:

1,5 միավոր

8. Կետադրի՛ր տեքստը:

Ծերունին մտքում կարդում էր. «Հայտնի է՝ Գրիգոր Նարեկացու՝ շատերին հետաքրքրող կյանքն ու հիշատակն ուղեկցվել են նրա կերպարը սրբագործող ավանդություններով: Դրանց մեջ նա երևում է որպես սքանչելագործ, հրաշագործ: Նրա աղոթքով հարություն է առնում նորապսակ երիտասարդը, կենդանանում են անշնչացած եզները, աղավնիները՝ երկնքում թևածող, առանց վախի իջնում են նրա պարզած ափի մեջ: Գավազանի մեկ հարվածով նա կարողացել է ժայռերից ջուր բխեցնել: Այդպիսի ավանդություններից մեկը՝ «Գեղ մի կայր՝ Նարեկ կասեն» վերնագրով, դեռևս 14-րդ դարում մշակել է Հովհաննես Թլկուրանցին»:

Փակելով Գրիգոր Նարեկացուն նվիրված գրքի վերջին էջը՝ ծերունին նայեց նրա նկարին և ասաց.

–Շնորհակալ եմ, որ բուժեցիր ինձ: «Նարեկ»-ը փրկեց իմ կյանքը, և ես դա երբեք չեմ մոռանա:

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

3 միավոր

9. Գտի՛ր և ուղղի՛ր սխալները այն նախադասություններում, որտեղ դրանք առկա են (բառագործածության, խնդրառության, համաձայնության):

ա. Բոլորը հոտնկաց ծափահարում էր անվանի երաժիշտներին:

Բոլորը հոտնկայս ծափահարում էին անվանի երաժիշտներին:

բ. Ճիշտն ասած՝ ես դույզն-ինչ կասկածում եմ, թե դուք կկարողանաք հաղթել այդ պայքարում:

Ճիշտն ասած՝ ես փոքր-ինչ կասկածում եմ, թե դուք կկարողանաք հաղթել այդ պայքարում:

գ. Դասընկերս ինձ առանց գլխարկ տեսավ և չճանաչեց:

Դասընկերս ինձ առանց գլխարկի տեսավ և չճանաչեց:

դ. Մենք բոլոր կանոնները սովորել ենք՝ բացի օժանդակ նյութերը:

Մենք բոլոր կանոնները սովորել ենք՝ բացի օժանդակ նյութերից:

ե. Քո վրա մեծ պատասխանատվություններ է դրված:

Քեզ վրա մեծ պատասխանատվություն է դրված:

2 միավոր

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

Լեզվամտածողություն

1. **Ինչպիսի՞ն է մեր բնօրրանը: Ինչպե՞ս մենք պիտի պահպանենք մեր հայրենիքը: Կարծիքդ արտահայտի՛ր 3 բարդ նախադասությամբ (համադասական և ստորադասական):**

3 միավոր

2. **Հայերը պահպանել են իրենց լեզուն, հինավուրց ավանդույթները: Ինչո՞ւ է հայոց լեզվի և հինավուրց ավանդույթների պահպանումը կարևոր հայրենիքի պահպանման գործում և հայ ժողովրդի կյանքում: Մտքերդ շարադրի՛ր 2 պարզ ընդարձակ և 2 բարդ նախադասությամբ:**

2 միավոր

3. ***Հնարք*** **և** ***հնարանք*** **բառերով կազմի՛ր մեկական նախադասություն:**

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն

2 միավոր

4. *Ծանր* և *սև* բառերը գործածի՛ր նախադասություններում ուղիղ և փոխաբերական իմաստներով:

Ուղիղ _____

փոխաբերական _____

ուղիղ _____

փոխաբերական _____

2 միավոր

5. *Դանակ* և *դեմք* բառերից յուրաքանչյուրով գրի՛ր 2-ական դարձվածք և դրանցից 2-ով կազմի՛ր նախադասություններ:

Դանակը ոսկորին հասցնել-մեկին համբերությունից հանել,

դանակի տակ ընկնել-վիրահատության ենթարկվել,

դեմքը բացվել-զվարթանալ,

դեմքը կորցնել-ինքնուրույնություն չունենալ:

2 միավոր

6. Բառաշարքում ընդգծի՛ր համանունները և դրանցից մեկը երկու տարբեր իմաստներով գործածի՛ր նախադասություններում:

Արի, փայտ, դանակ, ջուր, հորդ:

1 միավոր

© «Այբ» կրթական հիմնադրամ
© Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն